

ՀՐԱՀԱՆԳ ՀԱՅ ՔԱՀԱՆԱՆՆԵՐԻՆ

Ամեն մի պիտոյք մարդկային կեանքի մէջ ծնուում է, աճում և զարգանում, եթէ զգացուում է հարկաւորութիւն. և եթէ մարդկութեան մէջ ծնուել են ու առաջ գնացել արուեստներ ու գիտութիւններ, դոցա յառաջադիմութեան պատճառը եղել է միշտ պէտքը, անհրաժեշտութիւնը և դոքա սկսուելով ամենաբիրտ ձևերից և հետզհետէ, մարդկային մտքի զարգացման հետ, նրբանալով՝ հասել են մինչև մեր ժամանակուան այն նրբութեան, որ վայելչացնում է մեր նիւթական կեանքը:

Այսպէս է առաջ եկել և եկեղեցու նուիրապետութիւնը, երբ զգացուել է այդ բանի պէտքը: Երբ աշխարհիս Տէրը՝ և ամենամեծ Մարդը որոշել էր երկնքի արքայութեան սերմերը ցանել տղմի մէջ թաթախուած մարդկութեան սրտերում՝ գործող ձեռքերի պէտք ըզգացուեցաւ այդ մեծ գործը կատարելու համար և այդ պէտքը ստեղծեց տասներկու առաքեալներ, որոնք և ներշնչուած Աստուածային գաղափարներով եռանդուն կերպով կատարում էին իրանց առաքելական գործը, որի համար և կոչուած էին:

Բայց հետզհետէ աւելանում էր նորագարձ հաւատացեալների թիւը և առաքեալներն այլ ևս անկարող էին նորակազմ համայնքի հոգևոր պէտքերը հոգալ, ուստի հարկ եղաւ հիմնել մի պաշտօնէութիւն, որի

պարտքը պիտի լինէր այդ չափահաս մանուկ ամբոխին ուսուցանել նոր կրօնի գիտութիւնը և նոցա մարմնական պիտուքները հոգալ:

Այսպիսով կազմակերպուեցաւ եկեղեցու նուիրապետութիւնը, առաջ եկան կրօնի ուսուցման պաշտօնեաներ, որոնք ժամանակի ընթացքում զանազան դասակարգութիւնների բաժանուեցան: Մենք նպատակ չունինք այստեղ այդ դասակարգութեանց տեսակների մասին խօսել առանձին առանձին, այսքանը միայն կասենք, որ դոցա մէջ քահանայութիւնն իրաւամբ ամենակարևոր պաշտօնը ճանաչուեցաւ, իբրև առաւել մօտ բուն ժողովրդին իւր կոչումով, պաշտօնով և պարտաւորութիւններով և իբրև նորա շահերին ծառայելու կոչուած մի պաշտօնէութիւն:

* *
*

Ինչպէս ամեն մի համբակ և արհեստակ նախ քան իւր արհեստի ու գիտութեան գլուխ անցնելն ու առաջնորդութիւն ստանձնելը՝ նախապէս անցնում է այն բոլոր կայարաններով, որոնք աստիճանաբար նորան իւր մասնագիտութեան վերաբերեալ հմտութիւնն են մատակարարում և ուր նոքա պատրաստում են ստեղծագործող վարպետ և գիտնական դասնալու, այսպէս էր ի հնումն պատրաստում մեզանում և այն անձը, որ իրան որոշել էր նուիրել քահանայական աստիճանին. ընծայացուն, բացի իւր ստացած կրօնական և ընդհանուր կրթութիւնից, սովորում էր նաև իւր եկեղեցու վարդապետութիւնը և գաղափար էր ստանում նաև այլ վարդապետութեանց մասին, սովորում էր զանազանել իւրը և օտարը և վերջապէս գիտութեանց կենտրոններում պատրաստում էր ժողովրդին ծառայելու վեհ գործի համար:

Եւ այս ամեն հմտութիւնները ձեռք բերելուց յետոյ՝ կոչուում էր նա քահանայական սուրբ աստիճանին և ընտրեալը հրապարակով, ձեռնադրուելիս, բուրովին գիտակցաբար պատասխանում էր ձեռնադրող եպիսկոպոսի հարցերին և ուխտում։—

«Հրաժարիմ և նզովեմ զԱրիոս Աղէքսանդրացի, զՄակեդոն հայհոյիչն, զմարդադաւանն Նեստոր... և այլն։ Եւ

«Խոստովանիմ և աշակերտիմ ս. Գրոնեսիոսի Արիսպագացոյն, ս. Գրիգորի երկրորդ լուսաւորչին և որդւոց և թոռանց նորին, Սահակայ և Մեսրոպայ...» և այլն։

Քահանայական ֆունսմունքների մէջ պատրաստութեան այս ձևը շարունակուում էր, քանի որ գոյութիւն ունէին այդ նպատակին ծառայելու կոչուած՝ Հայաստանի բազմաթիւ ծաղկեալ վանքերն ու վանական դպրոցները, ուր մինչև որ երկար տարիներ ընծայացուն չգեգերէր՝ կրօնական գիտութիւնը հիմնովին իւրացնելու՝ քահանայութեան չէր արժանանում. և սորա չհետևանքըն այն էր լինում, որ քահանայ ձեռնադրուում էին միայն 30—40 տարեկան մարդիկ։

Գիտութեանց այդ տաճարներում նոքա սովորում էին նոյնպէս քահանայական կոչման վերաբերեալ զանազան հմտութիւններ, հովուութեան գործը և այլն։

Չնայելով սորան՝ ակներև է սակայն, որ քրիստոնէութեան նախկին դարերից արդէն կարևոր է համարուած որոշ հրահանգներ և կանոններ տալ քահանաներին թէ իրանց հօտի հովութեան գործը պատշաճապէս վարելու, իրանց պարտականութեանց անթերի կատարման, նոցա վարքի անարատ պահպանութեան և թէ առհասարակ նոցա կոչման վերաբերեալ այլ պարագաների մասին։ Նոցա բարոյականի և զարգացման խընդիրը և հետագայ դարերում միշտ մտածութեան նիւթ

է եղած ազգային եկեղեցական ժողովներում, որոնց շատերը գումարուեցան նոյն իսկ այդ նպատակով և այնտեղ սահմանուած կանոնների մի մեծագոյն մասը քահանաների պարտականութեանց են նուիրուած:

* *
*

Անցան այն երջանիկ օրերը և այժմ դրութիւնն այնպէս է փոխուել, որ ամեն մի քսանամեայ տղայ ցանկութիւն է յայտնում ժողովրդին ծառայել, նորան առաջնորդել և նորա հովուութեան ծանր լուծն իւր ուսերին բառնալ. հազիւ այդպիսիք մի քանի տարի անցնում են դպրանոցում և շատերն իսկ առ ոտս այս կամ այն քահանայի և ամենեկին միջոց ունեցած չեն ուսումնասիրել եկեղեցու անցեալը, եկեղեցական ժողովներով քահանայի վերայ գրուած ծանրածար պարտաւորութիւնները, երբ իշխելու, ղեկավարելու ցանկութիւն է յայտնուում նոցա մէջ:

Մեզ կասեն, թէ հէնց այդպիսիների համար էլ հիմնուած են հոգևոր դպրանոցները, որոնց միակ նըպատակն է հոգևորականներ պատրաստելը, ուրեմն թող հոգևորականութեան կոչուող անձը նախ աւարտէ այնտեղ աւանդուող ուսմունքներն ու ապա թեւակոխէ այն ասպարէզը. սխալ է, սակայն, այս առարկութիւնը և այն զիտելիքները, որոնք անհրաժեշտ են ամեն մի պարտաճանաչ քահանային, համոզուած ենք, նոյնպէս անձանօթ են և դպրոյաւարտ երիտասարդներին, ինչպէս նաև պատահական ընծայացուներին, և բացառութիւն չեն այնպիսի անհատներ, որոնք քահանայական կոչումն ընդունելով և աչքը բանալով զգում են իւրանց մի նոր, գրեթէ իւրեանց համար անձանօթ աշխարհում, ուր տիրապետող կարգերն ու սովորութիւնները նոյնպէս անձանօթ են իրան:

Այս տեսակների համար է անշուշտ և այս դրու-
թեան հետևանք, որ հոգևոր իշխանութիւնը, ժամա-
նակ առ ժամանակ, իսկ Ազգիս հայրապետները գրեթէ
միշտ կանոնական շրջաբերականներ են ուղղել հոգևոր
դասին, նոցա յիշեցրել եկեղեցու վարդապետութիւնը,
արարողութիւնները և վերջապէս իրանց պարտականու-
թիւնքն առ ժողովուրդը, որովհետև յանպատրաստից
մտնողներն այդ կոչման մէջ յաճախ թերացել են
եկեղեցու վարդապետութիւնից, իսկ պարտազանցները
մոլորութեան մէջ ձգել և զէպի կորուստ առաջնորդել
իրանց հայրական խնամքին յանձնուած հօտը:

* *
*

Հրահանգ և ուղեցոյց տալու գաղափարը օտար չէ
մեր հոգևոր իշխանութիւնից. դեռ 12-րդ դարում չա-
փազանց զգացուել էր այդպիսի մի հրահանգի կարևո-
րութիւնը և ս. Ներսէս Շնորհալի կաթողիկոսը իրեն
պարտք համարեց միօրինակելի «Ընդհանրական» թուղթ
ուղղել ազգի բոլոր դասակարգերի հետ նաև հոգևորական
ամեն տեսակ պաշտօնեաներին և յորդորել նոցա անվը-
թար պահպանել մեր հայրերից ընդունած ս. կրօնն ու
նորա բոլոր ծէսերը:

Ել չենք թուում այն անթիւ կոնդակները, որոնք
տրուած են զանազան ժամանակ Ազգիս հայրապետնե-
րից՝ հոգևորականներին իրենց պարտքերը յիշեցնելու
համար:

Սակայն, եթէ իւր ժամանակ այդ ամենը գործնա-
կան և նպատակայարմար էին և ծառայում էին հո-
գևորական դասի ուղղութեանը՝ կարծում ենք թէ այժմ
բաւականաչափ կորցրել են իրանց նշանակութիւնը,
վասն զի ո՞վ չգիտէ մեզանից, որ ներկայումս մեր քա-
հանաները այդ տեսակ Վիթած, գրքերով չեն հետա-
քրքրւում և չեն կարգում ամենևին:

Ժամանակը փոխուել է և մի ուրիշ բանով պէտք էր փոխարինել դոցա, ուստի և դոցա հետևեցին հոգեւոր իշխանութեան դարուս մէջ տեղացող հրահանգներն ու շրջաբերականները, յաճախ պատժի սպառնալիքներով: Բայց սոքա էլ ցանկալի հետևանքը չունեցան, այլ ժամանակաւոր ազդեցութիւն էին գործում միայն, որոնցից չէին օգտուում ո՛չ քահանաները և ոչ ժողովուրդը, որովհետև այդ հրահանգներն էլ յաճախ փոփոխուում էին, մէկ հրահանգին միւսն էր փոխարինում, միշտ էլ մէկը միւսին հակառակ, նոր իշխանաւորը ճգնում էր իւր նախորդի լիշատակը ոչնչացնել, իսկ երբեմն մինչև անգամ միևնոյն անձը մէկը միւսից լետոյ հրատարակել է բոլորովին միմեանց հակասող հրահանգներ, նայելով ժամանակին և կամ իւր տրամադրութեան:

Չենք կարող մոռանալ, օրինակ, որ հանգ. Վահան Ծ. վ. Բաստամեանը մի օր Տփլիսում հրաւիրուելով մինչեցեալի յուղարկաւորութեանը, օրուայ ջերմ եղանակին առաջարկեց քահանայից հովանոցը գոցել, համարելով այդ նսեմացնող հոգևոր հանդիսի պայծառութիւնը. քահանան ընդդիմացաւ, իսկ հ. Բաստամեանցը ս. էջմիածին գնալով ուղարկել տուեց մի խիստ հրաման վերացնելու այդ սովորութիւնը, որի հետևանքն այն եղաւ, որ յուղարկաւորութեան հանդիսին բաց գլխով գնալուն զոհ գնաց մի ծերունի քահանայ. սակայն հետաքրքիրն այն է, որ այս սովորութիւնն այնուհետև քանիցս արգելուել է և թոյլատրուել. այս տեսակ օրինակներ կարելի է բերել ինչքան կամիք, և այդ օրինակները կվերաբերին ոչ միայն սոսկական, փոփոխելի սովորութիւններին և ծէսերին, այլ նաև շատ էական խնդիրներին:

* * *

Այստեղից հետևում է, որ այս ձևերը չեն հասնում իրենց նպատակին, ասլ քահանաներին պէտք է հրահանգել մի ասլ եղանակով, աւելի տևական, հաստատուն, որով կարող լինինք հասնել ցանկալի նպատակին:

Երբ մտք մի նոր աշխարհ է մտնում, հարկ չէ արդեօք, որ նորա ձեռքը անմիջապէս տրուի մի հրահանգ, թէ իւր այդ նոր պաշտօնի մէջ ինչ պարտականութիւններ և իրաւունքներ ունի նա: Եթէ զինուորը, սպան ունին իրանց կանոնադիրքը, ուսուցիչը իւր կանոնադրութիւնը, պետական և քաղաքական ամեն մի պաշտօնեայ իւր հրահանգները և առհասարակ ամեն չափ ու հասակի համար կան որոշուած կենցաղավարութեան և գործունէութեան լատկացրած սահմանադրութիւններ ու կանոնադրութիւններ և ամեն մի պաշտօնէի ներկայ կրթուած դարում, ինչ դասակարգի էլ պատկանելիս լինի և ինչ հիմնարկութեան մէջ էլ նա ծառայէ տրուում է մի հրահանգ, մի ուղեցոյց, որ որոշում է նորա պարտքի և իրաւունքի, նորա սպասուորակութեան սահմանները, որոնցից դուրս գալ՝ կը նըշանակէ կամովին ենթարկել իրան որոշեալ պատժի և կամ իսպառ զրկուիլ իւր պաշտօնից, ինչո՞ւ չէ կարելի նոյնը անել և քահանաների վերաբերմամբ, որոնց թիւն արդէն լէգէօն է, ինչո՞ւ քահանան, մտնելով այդ նուիրական ասպարէզը, չպիտի գիտենայ, թէ ինչ ունի անելիք իւր առաջիկայ կեանքում, չպէտք է ծանօթ լինի մի որոշ ուղեցոյցի հետ, քան թէ ստիպուի վիզը ծուել սորան կամ նորան՝ այս այն աւանդութեան և ծէսի հանգամանքներին ծանօթանալու. վերջապէս ինչո՞ւ չպէտքէ լինի մի մշակուած, տպագրուած ու հոգեւոր ծալրադոյն իշխանութիւնից վաւերացրած մի հրահանգ, որի մէջ բազմակողմանի կերպով ցոյց տուած

լինին նոցա բոլոր պարտականութիւնները, հիմնուած ի հարկէ հայ եկեղեցու վարդապետութեան, առաքելական, տիեզերական երեք ժողովների, ազգային եկեղեցական ժողովներում որոշուած կանոնների, եկեղեցու ս. Հարց սահմանադրութիւնների եւ հայրապետական կանոնական կոնդակների վերայ և որը պարտաւոր լինի անգիր իմանալ ամեն մէկը, որ պատրաստուում է մըտնել այդ վեհ կոչման մէջ: Մեր կարծիքով այդպիսի մի ուղեցոյց պատճառ կարող է դառնալ նաև վերացնելու այն անթիւ ծիսական և արարողական տարբերութիւնները, որոնք մինչև այժմս գոյութիւն ունին մեր եկեղեցիներում:

* *
*

Մենք կարծում ենք, որ ժամանակն է և անհրաժեշտ իրականացնել այս առաջարկը. այդ ուղեցոյցը կամ կանոնադիրը հետևեալ բաժանմունքները կարող է ունենալ.

- Ա. Մկրտութիւն և դրոշմ. — ժամանակը, տեղը, հաստատուն և շարժական աւազան, երեխայի անուն, կնքահօր կրօնն ու դաւանութիւնը:
- Բ. Ապաշխարութիւն. — պայմանը, տեղը, վարձատրութիւնը (արգելուած):
- Գ. Պատարագ և հաղորդութիւն. — պատրաստութիւն:
- Դ. Ամուսնութիւն. — ա. բ. — գ. և դ պսակի հրաման, իւրաքանչիւրի կատարման ծէսը, ներելի օրերը, թոյլատրուած աստիճանը:
- Ե. Չեղնադրութիւն. — քառասունքի կանոններ.
- Զ. Վերջին օծում. — հիւանդներին հաղորդելը.
- Է. Թաղման ծէս. — ո՞ր վախճանուածներին չպէտք ծէսով թաղել. թոյլատրութիւն. նորամուտ ծէսեր և արարողութիւններ (արգելուած):
- Ը. Տնօրհնէք. — օրերը, ո՞րոնց աները չպէտք է օրհնել.

Թ. Այցելութիւն. — պարտադիր այց ժողովրդեան:

Ժ. Կարգապահութիւն. — կանոններ:

ԺԱ. Վկայականներ. — ծննդեան, պսակի, թաղման քաղուածք, խոստովանութեան և հաղորդութեան, չքաւորութեան, ամուրիութեան վկայականներ:

ԺԲ. Արգելք. — ի՞նչն է արգելուած քահանային:

ԺԳ. Չևեր. — քաղուածների, ա. պսակի, բ. և գ. պսակի և դ. պսակի յայտարարութիւնների, խոստովանութեան և հաղորդութեան վկայականների, չքաւորութեան և ամուրիութեան վկայականների, ընտանեկան կապի, ճիւղագրութեան (ազգակցական, խնամական և կնքահայրական):

ԺԴ. Ցիտղոսներ. — Հայրապետից մինչև ղպիրը և հոգևոր վարչութեանց:

ԺԵ. Զգեստ. — բոլոր հոգևորականներին՝ յականէ.

ԺԶ. Պարգևներ. — նոյնպէս.

ԺԷ. Հասոյթ. — որոշակի...

եւ այլն:

Յանկալի է, որ Հոգևոր իշխանութիւնն այս ծրագրի համեմատ մի լիակատար կանոնադրութիւն կազմէր և ամեն մի նորընծայի ձեռը տար առաջին իսկ օրից, որով յոյս ունինք շատ և շատ անախորժութիւններէց կազատէր թէ իրան քահանային, թէ իշխանութեան և թէ մանաւանդ ժողովրդին:

ԳԻՒՑ ԱՒԱԳ ԳԱՀ: ԱՂԱՆԵԱՆՑ